բարձունքի վրայ ունեցել է իր ամրոց-բերդը, դղեակը, կամ ապարանքը, վարժոցը եւ դանձարան-թանգարանը: Նախարարը իր ամրոց-դղեակում ապրել է իր ընտանիքով, արիւնակիցներով-սեպուհներով, անջատ եւ «որպէս զերազոյն էակ», հեռու մահկանացուներից: Գեղերում ապրել են ազատական սպանները, որոնք առաջացել են ընդհանրապէս նախարարական սերնդից եւ կազմել են երկրի զինուորական դասակարգը: Ազատական սպան չի զբաղուել արհեստներով կամ երկրագործութեամբ. նա մասնակցել է պատերազմներին, որսորդութիւններին, մանուկների դաստիարակութեամբ եւ վարժութեամբ: Մացրանեռում ապրել են երկրագործներն ու արհեստաւորները, որոնք համարուել են իշխանի ստրուկներն, ազատականների՝ բանուորաշխատաւորները: Ազատականները երբեք չեն թողել որ իրենց հաւասարուեն այդ ստրուկները, որոնց ոյժը շահագործել եւ ապրել են: Ընտիր նժոյգներ, ուժեղ ցլեր, ժիր եղներ եւ գոմէշներ ունենալու եւ դրանց բազմացնելու համար նախարարները սպաների ղեկավարութեամբ պահպանել են ջոկեր, նախիրներ եւ հօտեր՝ ոչխար եւ այծ: Այս պատճառով գեղից դուրս, մացրայի եւ գեղի մէջ ունեցել են ախոռներ ձիերի համար եւ գոմեր ցլերի, եղների եւ գոմէշների համար: Ոչխարն ընդհանրապէս պահել են